

ածել զայս խորհուրդ փրկարար՝ գումարեցան ամենեքեան առ Ստեփան Պատրիարք (՚ի 26 Օգոստոսի, 1836), ուր գտաւ Կիրակոս Եպիսկոպոս եւ Փոխանորդ Յովհաննէս վարդապետն : Եւ ՚ի ժողովի աստ հաճութեամբ ամենեցուն սահմանեցաւ կառուցանել զՈւսումնարանն յԻւսկիւտար՝ ՚ի տեղի խարխալեալ վանաց Երուսաղէմի, ուսանիլ մանկանց նախ զդպրութիւն հայրենի լեզուի եւ զբաւանութիւն եկեղեցւոյն Հայաստանեայց, եւ ապա մարդիլ յայլ եւ այլ լեզուս եւ ՚ի կարեւոր գիտութիւնս օտար ազգաց :

Չափ Ուսումնարանին սահմանեցաւ լինել 2500 կանգուն քառակուսի՝ կրկնայարկ եւ բազմասենեակ ամենայն պիտոյիւք : զբովանդակ ծախս տարեկան պիտոյից Ուսումնարանին յանձն առին Իշխանաւորք ինքեանք հոգալ, բայց զլինութեան ծախսն հանել յԵրուսաղէմէ, եւ յայլ երեւելի վանօրէից եւ յԱռաջնորդաց ըստ իւրաքանչիւր կարի, եւ զհակառակողսն դատեսցեն իրրեւ ոխերիմ թշնամի գիտութեան, եւ ընկեսցեն յԱթոռոյ՝ առաքելով զայլ ոք ՚ի տեղի նոցա :

Ապա խնդրեցին նախ յԵրուսաղէմէ ՚ի ձեռն Փոխանորդին 200,000 դահեկան, եւ առաքեցաւ Փոխանակազիրն յԵգիպտոս առ երեւելի վաճառական Ստեփանէ Չիչինեան, զի ՚ի լրանալ պայմանաժամին, անթերի աւցէ զգումարն յԱթոռոյն : Եւ յեւ ամենայնի գրեցին Իշխանաւորք զիր բաղմակնիք առ Պօղոս Եպիսկոպոս յԵրուսաղէմ՝ վասն այսր խնդրոյ, գրեցին նաև առանձին առանձին Ստեփան Պատրիարք, Կիրակոս Եպիսկոպոս եւ Փոխանորդ Յովհաննէս վարդապետ, յորս աղաչանօք եւ բարեւէր մտօք յորդոր լինէին յարգել զորոշումն Ազգապետաց, եւ վաղ ընդ փոյթ վճարել զգումարն ՚ի պայմանեալ ժամանակին ՚ի սէր ազգին եւ ՚ի յառաջադիմութիւն մանկանց եկեղեցւոյ : Եւ զի առաւել եւս ջերմացին սիրտք Ամիրայից ՚ի վերայ Աթոռոյն՝ լինիլ խնամակալ, որ ՚ի ձեռս նոցին կատարեցան եւ կատարին ամենայն գործք եւ խնդիրք նորին : Գրիգոր եւ Յովհաննէս Ճարտարապետք, թէպէտ եւ էին ՚ի ժողովի աստ եւ կնքեալ զգիրն, այլ առանձին մտերմաբար ինն գրեցին առ Պօղոս, զարթուցանել զմիտս նորին ՚ի գործադրութիւն խնդրոյն, յուչ ածեալ զբանս նորին, որ ասացեալ էր եր-